ԿԱՐԻՆԻ ԶԻՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XX Դ. ՍԿԶԲԻՆ*

Փ. Հ. ՋԻՖՏԱԼԱՐՅԱՆ

Զինագործությունը կարևոր և շատ տարածված արհեստներից է։ Զենքերի հիմնական տեսակները երևան են եկել անհիշելի ժամանակներում[1]։ Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերված զենքերի նախնական տեսակներն ու գործիքները, որոնցով պատրաստել են զենքի այս կամ այն տեսակը, վառ ապացույց են Հայկական բարձրավանդակում առկա զինագործության, որը շուտ անջատվեց դարբնությունից և իր ենթաճյուղերով հանդերձ դարձավ առանձին արհեստ[2]։ Հայկական մատենագրական աղբյուրներում բազմաթիվ տեղեկություններ կան միջնադարյան Հայաստանի զորքի տեսակների մասին, որոնք կազմվում էին ըստ զենքի տեսակի[3]։ Միջնադարյան Հայաստանի զինագործության խոշոր կենտրոններ էին Դվինն[4] ու Անին։

Զինագործությունը ևս, մյուս արհեստների նման, դարերի ընթացքում անցել է զարգացման բազմաթիվ փուլեր և աստիճանաբար հասել զարգացման նոր մակարդակի՝ XV—XVI դդ. հրազենի արտադրմանը։

Կարինը և Խլաթը զինագործության խոշոր կենտրոններ էին դեռևս միջնադարում. այնտեղ արտադրված զենքերի մի մասը արտահանվում էր տարբեր երկրներ[5]։ Գրականության մեջ Կարինի զինագործության մասին աննշան հիշատակություններ կան, որոնք գերազանցապես վերաբերում են զինագործության պատմությանը։

---

* Այս հոդվածի հեղինակը ուսումնասիրություններ կատարող գիտնական չէ։ Նա 1830 թ. Կարինից Ախլցխա գաղթած Զիֆտալարյանների ընտանիքի վերջին շառավիղն է, որ անձամբ զբաղվել է իրենց տոհմական արհեստը հանդիսացող զինագործությամբ։

Նրա նախահայրերը, ինչպես և ինքը պատրաստում էին կայծքարի զարդարուն հրացաններ ու ատրճանակներ և այդ բնագավառում մեծ հռչակ էին վայելում Ախլցխայում և նրա շրջաններից դուրս։ Տարբեր ժամանակներում իրենց ձեռքի աշխատանքներով Զիֆտալարյանները մասնակցել են արհեստագործական աշխարհահանդեսներին և արժանացել բարձր գնահատականի ու խրախուսանքի։

Զիֆտալարյանների ընտանիքում սրբությամբ պահվում էին զինագործական արհեստի գաղտնիքները, որոնք ավագ սերնդից փոխանցվում էին կրտսերներին, բայց երբեք դուրս չէին գալիս իրենց ընտանիքի սահմաններից։

Այսօր այդ արհեստը դադարել է գոյություն ունենալուց և նրա վերջին ներկայացուցիչը՝ Փաշիկ Զիֆտալարյանը (ծնվ. 1900 թ.) ներկա հոդվածով հասարակության առաջ բաց է անում դամասկյան պողպատ պատրաստելու, զենքեր շինելու և դրվագելու հետաքրքիր արհեստի գաղտնիքները։

[1] С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении (III—I тыс. до н. э.). Ереван, 1966, стр. 5.

[2] Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1958, էջ 142։

[3] Նույն տեղում, էջ 143։

[4] Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 161։

[5] Վ. Ա. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում 4—18-րդ դդ., Երևան, 1956, էջ 67։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո Բարձր Հայքից տեղի ունեցած գաղթի հետևանքով (1829—1831 թթ.) զինագործությունը և մյուս արհեստները գաղթող արհեստավորների միջոցով տարածվեցին նրանց նոր բնակավայրերում՝ Ախլցխայում, Ջավախքում, Շիրակում[6]։

Արհեստավորական միություններն Ախլցխայում կոչվում էին էսնաֆություններ[7]։ Գաղթական կարնեցիները պահպանեցին այդ էսնաֆությունները ընդհուպ XX դ. սկիզբը։ Նրանք աշխատում էին Ախլցխայում պահպանել իրենց ազգային կենցաղն ու սովորությունները, որի գլխավոր նեցուկը հենց տնայնագործ արհեստավորությունն էր իր էսնաֆներով[8]։ Մեծ համբավ ունեին Ախլցխայի հայ արհեստավորների արծաթյա և ոսկյա ցանցկեն առարկաները, որոնք տարածվում էին նաև ուրիշ քաղաքներում[9]։

Գաղթող արհեստավորների թվում իրենց ընտանիքներով Ախլցխայում բնակություն էին հաստատել Զիֆտալարյան և Գեմշյան երկու զինագործ եղբայրները։ Նրանք բերել էին Կարինի զինագործության իրենց գործիքներն ու պատրաստման եղանակը և այն երկար ժամանակ սերնդե-սերունդ փոխանցելով, աշխատում էին Ախլցխայում։ Այդ գործիքները այժմ գտնվում են Ախլցխայի գավառագիտական թանգարանում, մի մասն էլ՝ երկու կայծքարով հրացան և մեկ չորսփողանի ատրճանակ, Հայաստանի պատմության պետական թանգարանում[10]։ Նրանց արհեստանոցի մասին նշում է նաև հնագետ Կ. Կ. Զոլոկաշվիլին[11]։

Զիֆտալարյան եղբայրներից կրտսերը՝ Մկրտիչը, իր որակյալ, բարձրարվեստ աշխատանքների և նորարարության համար բազմիցս արժանացել է Ռուսաստանում և Եվրոպայում կազմակերպված ցուցահանդեսների՝ ոսկե մեդալի և դրամական պարգևների։

Յ. Տեր-Միրաքյանը Ախլցխայով ճանապարհորդելիս հիացմունքով և զարմանքով է արտահայտվում Զիֆտալարյանների զինագործության մասին։ Նա գրում է. «Այս անգամ իմ ուշադրությունը գրավեցին պ. պ. Զիֆտալարյան եղբայրները, որոնք հասարակ միջոցներով և առանց մեքենաների շինում են ամենապատվական եվրոպական զենքեր։ Այնքան մաքուր և ընտիր ձեռակերտից են և միևնույն ժամանակ անհամեմատ դիմացկուն, որ գործարանից հանած ապրանքից անհամեմատ ավելի արժեք ունին։ Այս հասարակ արհեստավորների հնարագիտությունն ու տոկունությունը զարմանալի է»[12]։

Հայտնի է, որ Ալեքսանդր II և Նիկոլայ I ցարերը Բորժոմում եղած ժամանակ՝ 1860-ական թվականներին, նվեր են ստացել Մկրտիչ Զիֆտալար-

---

6 Х. А. Вермишев, Экономический быт государственных крестьян в Ахалцихском и Ахалкалакском уездах Тифлисской губернии («Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», том. III, часть II, Тифлис, 1886, стр. 18).

7 Կ. Գ. Ղաֆադարյան, Մի փաստաթուղթ Ախլցխայի հայերի կենցաղի վերաբերյալ («Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 3, էջ 165)։

8 Նույն տեղում, էջ 166։

9 С. Гулишамбаров, Город Ахалцих («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XI, Тифлис, 1891, стр. 210).

10 Տե՛ս Հայաստանի պատմության թանգարան, ազգագրական ֆոնդ, №№ 7296, 7345, 7169։

11 К. К. Чолокашвили, К истории оружейного производства Грузии, автореферат кандидатской диссертации, Тбилиси, 1961, стр. 3.

12 Յ. Տեր-Միրաքյան, Ձմյուռնիայից Ալեքսանդրապոլ (փշրանք ուղևորի տպավորություններից, «Մուրճ», 1890, № 9, էջ 1677)։

յանի պատրաստած կայծքարով հրացանը և կարաբինը։ Այժմ այդ զենքերը պահվում են Էրմիտաժի Կովկասի բաժնում։

Զիֆտալարյանների արտադրած զենքերը մեծ համբավ էին ձեռք բերել ոչ միայն Ախլցխայում, այլև ամբողջ Կովկասում։ Լ. Զագուրսկին, որ XIX դ. վերջին ճանապարհորդել է Ախլցխայի շրջանով, հիացմունքով է արտահայտվում տեղի արհեստների, այդ թվում նաև զինագործության մասին։ Նա գրում է. «Ախլցխան աչքի է ընկնում նրբագեղ մետաքսյա տրեզի պատրաստման, արծաթյա թելքաշ առարկաների արտադրության հետ մեկտեղ նաև ատրճանակների՝ հատկապես փորագրազարդ փողերի պատրաստմամբ»[13]։

Զինագործության առանձնահատկությունը, որի մեջ հմտացել էին Զիֆտալարյանները և սերնդե-սերունդ փոխանցել միմյանց, զենքը ոսկյա տարբեր զարդամոտիվներով զարդարելն է՝ դամասկի աշխատանքը։ Հրացանի փողն ու փակաղակը զարդարվում էր ոսկյա նուրբ թելերով, իսկ փայտյա մասերը՝ արծաթյա նախշազարդերով և ոսկրով։ Հրացանի խզակոթի ծայրը՝ կոթունը և փողի մոտ վերջացող փայտային մասը պատրաստվում էր կետի ոսկորից, կարաբինի խզակոթի գնդաձև գլուխը՝ կետի ատամից։

Զիֆտալարյանների պատրաստած հրացանի շշի կեսը երկաթից էր, կեսը՝ հոնի փայտից։ Թանկարժեք հրացանի ամրացնող զույգ օղակները պատրաստվում էին արծաթից, իսկ հասարակ հրացանինը՝ արույրից։ Հրացանի փողը սովորաբար ութանիստ էր, իսկ փոքր կարաբինինը՝ կլոր։ Ըստ որում՝ փողի բերանը պատրաստվում էր լայն, որպեսզի կրակելու ժամանակ մանրագնդակները ցրվեն։

Զինագործության համար հումք էին ծառայում դարբնության և պղնձագործության արտադրանքի մաշված բեկորները։ Դրանք շիկացնում և ձուլում էին անհրաժեշտ քանակությամբ, ապա ծակում դարձնում փող։ Փողը ծակելու համար հալված երկաթը տափակեցնում էին ցանկալի հաստությամբ կամ ամբողջական, կամ էլ առանձին հատվածներով։ Խարտոց պատրաստելու դժվարությունը հաշվի առնելով՝ զինագործն աշխատում էր ձուլված երկաթից փող պատրաստել առանց խարտոցի։ Սովորաբար խողովակը ստացվում էր 2 մմ հաստության թերթը ծռելու, եզրերը միմյանց միացնելու միջոցով։ Նույն եղանակով ձուլված երկաթից պատրաստում էին նաև 8 մմ × 6 մմ չափերի քառանկյունաձև ձողեր։ Պատրաստած ձողի երկարությունը պետք է համապատասխաներ հրացանի փողին և այն պարուրաձև փաթաթվում էր խողովակի վրա, որից հետո փողի հետ միասին շիկացվում։ Շիկացած երկաթի վրա լցնում էին ավազ կամ ծեծած եռքար, ապա շիկացած վիճակով հանում էին զնդանի վրա, երկու հոգով մուրճերի հարվածով դարձնում միաձույլ զանգված, որից հետո խողովակը դառնում էր սնամեջ։ Երկրորդ պրոցեսում, շիկացնելուց հետո, մուրճի հարվածներով այն դարձ-

---

[13] Л. Загурский, Поездка в Ахалцихский уезд в 1872 г. Тифлис, 1873, стр. 24.

Ի դեպ, զինագործ Զիֆտալարյաններն ունեցել են իրենց քառանկյունաձև զինանշանը, միջնամասի Զիֆտալար փորագրությամբ։ Զիֆտալարյանների պատրաստած զենքի տարածման մասին է խոսում նաև այն փաստը, որ նրանք ժամանակին հրավեր են ստացել փոխադրվել Անգլիա և այնտեղ զբաղվել իրենց արհեստով (հրավիրագիրը պահպանվում է Զիֆտալարյանների հարազատների մոտ)։

Զինագործ Զիֆտալարյան եղբայրներն Ախլցխայում՝ ձախ կողմում նստածը վարպետ Մկրտիչն է, իսկ աջ կողմում՝ Հովհաննեսը, 1862 թ.

Զորս փողանի ատրճանակ. գործ Մկրտիչ Զիֆտալարյանի (ՀՊՊԹ)



Զինագործի գործիքներ. Ախլցխա, XIX դ. վերջ (ՀՊՊԹ)

նում էին ութանիստ։ Փողը ներսից ավելի կլորացնելու նպատակով ամրացվում էր հաստոցի վրա, որի համար օգտագործվում էր չորսանիստ գլխով սրածայր գործիք-ռայբերը, որին հաջորդում էր երկրորդ տեսակի ռայբերը՝ դարձյալ քառանիստ, բայց ոչ սրածայր, աննշան տրապեցիայի ձևով։ Սրա անկյունները ատամնավոր էին, որոնց շնորհիվ խողովակի ներսը կտրելով, լայնացնելով դարձնում էին ցանկացած չափի։ Գործածվում էին քառանկյունաձև ռայբերի մի քանի տեսակներ։

Փողի մաքրումը կատարվում էր թոփլի կոչված գործիքով, որը արտաքին մասից խարտոց էր, իսկ ներսից ուներ երկայնակի ճեղքվածք։ Այդ ճեղքի մեջ դրվում էր սեպաձև փայտ, որի շնորհիվ գործիքը լայնանում էր և փողը լրիվ մաքրում։ Ութանիստ ձողի ամբողջ մակերեսը հղկվում էր խարտոցով, բայց ոչ ողորկ, որից հետո ստուգվում էր փողի ուղիղ վիճակը։ Այդ նպատակի համար գործածվում էր աղեղ կոչված գործիքը, որի թելը լատունից էր, մի ծայրը ամրացված անշարժ աղեղին, մյուս՝ շարժական ծայրին ամրացվում էր անագի գնդակ։ Վերջինիս միջից հանում էին թելը և հագցնում փողի մեջ, ապա նորից ամրացնում իր տեղը։ Լույսի դիմաց պահելով, ձգված թելի միջոցով ստուգվում էր փողի ուղիղ լինելը։ Նկատված թեքությունը ուղղվում էր մուրճի հարվածներով։

Հաջորդ գործողությունը փողի մեջ առ ու ակոս փորելն էր, որի համար փողն ամրացվում էր համապատասխան՝ շեշխանի տոլաբ հաստոցին։ Հաստոցի վրա վեց շարքով դասավորված թեք ատամների միջոցով, որը ծայրի պտուտակի շարժումով ոլորվելով մտնում էր փողի մեջ և դուրս գալիս, կատարում էր առ ու ակոս փորելու աշխատանքը, աստիճանաբար պտտվելով մինչև վերջին կետը։ Դրանից հետո փողը արտաքին մասից խարտվում էր ավելի մաքուր և այսպիսով փողի պատրաստման աշխատանքն ավարտվում էր։

Հնում, Կարինում և Կարինից գաղթած վայրերում յուրօրինակ էր դամասկյան փող պատրաստելու ժողովրդական եղանակը. այդ նպատակով զինագործներն օգտագործում էին պողպատյա և երկաթյա անպետքացած կենցաղային առարկաներ (սղոց, գերանդի և այլն) կամ էլ դրանց բեկորները[14]։ Այդ մնացորդները դասավորում էին մեջ ընդ մեջ, ապա խոտի խրձի նման փոքրիկ խրձիկ էին անում մոտ 30 սմ երկարությամբ, կապում էին զինագործի պատրաստած երկաթյա թելով և շիկացնում, վրան լցնելով ավազ կամ եռաքար։ Հալվածքը հանում էին և զնդանի վրա տափակացնում։ Այս եղանակով միաժամանակ պատրաստում էին երկար ձողեր 8 մմ × 6 մմ չափի, նույն ձևով փաթաթում, ինչպես հասարակ փողը։

Զենքերը ոսկով և արծաթով զարդարելը ընդունված էր դեռևս միջնադարում, հատկապես իշխանական թագավորական զենքեր պատրաստելիս։ Այստեղ կարևոր էր զարդանախշեր կատարելու եղանակը, որի համար կիրառվում էր ծծմբախմորը, որով պատում էին փողը, փաթաթում կտորով և տաքացնելու նպատակով տեղավորում փթրոցի մեջ՝ պահելով 8—10 ժամ։ Ծծումբը քայքայում էր երկաթե մասերը, իսկ պողպատյինը մնում էր։ Մաքրելուց հետո երևում էին նախշերը։

---

[14] К. К. Чолокашвили, указ. раб., стр. 19.

Ծաղկանախշերի բազմազանությունը կախված էր պատրաստման եղանակից։ Զարդանախշերի համար ձույլ ոսկուց պատրաստում էին գրեթե մազի հաստությամբ թել։ Փողի վրա սրածայր երկաթի ճզաճաղով նկարում էին ցանկացած զարդանախշը։ Նուրբ հատիչի միջոցով խորացնում էին նախշագծերը և դրանց մեջ ստեղծում խարտոցի նման ատամներ։ Այդ գծանախշերի մեջ փոքր մուրճիկի հարվածների օգնությամբ տեղավորվում էր ոսկեթելը և ատամների մեջ ամրացվում։ Փողի զարդարման երկրորդ եղանակը փորագիր զարդեր կատարելն էր։

Հրացանի կարևոր մասերից էր խզակոթը, որի պատրաստման համար դինագործները օգտագործում էին փայտից պատրաստված նմուշատիպը։ Խզակոթ պատրաստելու համար մեծ մասամբ օգտագործվում էր դեղնասպիտակավուն շերտավոր թզկենի։ Նմուշատիպի օրինակով փայտը կտրում, հղկում էին, ձևավորում և ապա ներզարդարման եղանակով զարդարում արծաթյա ձևավոր տախտակներով։ Երբեմն այդ զարդերը պատրաստում էին եղնիկի եղջյուրից կամ սադաֆից, իսկ խզակոթի հատակը պատվում էր կետի ոսկրով։



Հրացանի կենտրոնական մասը Ջիֆտալարյանների պատրաստածն է, Ախլցխա, XIX դ. վերջ (ՀՊՊԹ)

Խզակոթի նախշազարդումը կատարվում էր այսպես կոչված զարնիշանի միջոցով, որը պատրաստվում էր դեղնավուն արույրե խողովակում եռանիստ ձողեր միմյանց կպած տեղավորելու եղանակով։ Դրա լայնակի կտրվածքը ներկայացնում էր մի շրջան, ներսում եռանկյունիների շարան-զարդանախշ։

Զարդանախշմանը հաջորդում է ներկելը։ Սովորաբար փայտը փոքր խոնավությունից փոշոտվում է. այդ երևույթը կանխելու համար հրացանի փայտի վրա ջուր էին քսում և չորացնում։ Չորացած վիճակում քերում էին, հղկում և ապա նոր ներկում։ Ներկման երկու եղանակ կար. ա) թրջված կիրը քսում էին փայտի վրա, չորացնում, ապա քերում, մաքրում ու ձեթ քսում, որի հետևանքով հրացանի փայտե մասը ստանում էր կարմիր գույն, բ) հրացանի մակերեսը ազոտաթթվով պատելուց հետո պահում էին կրակի վրա, որից հետո փայտը ստանում էր կարմիր գույն, իսկ ձեթ քսելուց հետո՝ մուգ կարմիր։

Նշված գործողությունները կատարելուց հետո ամրացվում էր խզակոթի հատակը։ Փողը փայտյա մասին էր ամրացվում պտուտակների և 2—3 արծաթյա կամ դեղնավուն արույրի օղերի միջոցով։

Զենքը փորձարկվում էր հետևյալ կերպ. փողի մեջ լցնում էին վառոդ և արճիճ, կապում ծառից, փակաղակի կեռիկից ամրացնում երկար թել և հեռվից ձգում, որպեսզի խոտան հրացանը կամ կարաբինը պայթյունի ժամանակ փորձարկողին չվնասի։

Մինչև XIX դ. վերջը զինագործ վարպետները երեք խմբի էին բաժանվում. ա) փող պատրաստող վարպետ (թվանգչի), բ) փակաղակ պատրաստող վարպետ (չախմախչի), գ) փայտյա մասեր պատրաստող վարպետ (ղոնդաղչի)։

XX դ. սկզբին փող պատրաստելու եղանակը Հակոբ Չիֆտալարյանի հորինած նոր եղանակի շնորհիվ փոփոխության ենթարկվեց, որը շարունակվեց մինչև 1918 թ.։

Արհեստավորական էսնաֆությունները Ախլցխայում ևս ունեին իրենց կանոնադրությունը, ավանդական օրերը, սովորույթները, արհեստի հովանավորները։ Միության արհեստավորներն էին որոշում հովանավորի հարցը, ձգտելով իրենց համքարությունը կապել իրենց արհեստին առնչվող նշանավոր ավանդական կամ իրական գործչի, գյուտարարի, երբեմն էլ առասպելական անձնավորության հետ։ Այսպես՝ արծաթագործների հովանավորն էր համարվում Բերսելիոսը, գինեվաճառներինը՝ Արիստոտելը, պղնձագործներինն ու դարբիններինը՝ Կայենի սերունդները՝ Օբելն ու Տոբելը, իսկ զինագործներինը՝ (թուր պատրաստողներ, դաշյունագործներ, հրացանագործներ՝ բաղկացած երեք ենթախմբերից) Հովհան Օձնեցին[15]։

Այսպիսով, Կարինի զինագործությունը իր բնույթով՝ թե՛ զինագործի վարպետությամբ և թե՛ սովորություններով ուներ իր յուրօրինակ կողմերը։ Միանգամայն ինքնատիպ էր հրացանի, կարաբինի պատրաստման եղանակը՝ կապված Չիֆտալարյան եղբայրների անվան հետ։

Զինագործության մեջ կիրառված եղանակները, որ հատուկ էին Կարինին, երկար ժամանակ պահպանվեցին Ախլցխայում։

ОРУЖЕЙНОЕ ДЕЛО КАРИНА КОНЦА XIX—НАЧАЛА XX ВВ.

П. А. ЧИФТАЛАРЯН

Резюме

Одним из ремесел жителей Карина (Эрзерум) являлось оружейное дело. По присоединении Восточной Армении к России оружейники братья Чифталарян осели в Ахалцихе и продолжали занятие своим ремеслом, пользуясь каринской технологией и орудиями, привезенными оттуда.

Чифталаряны, передавая свое мастерство из рода в род, усовершенствовали ремесло и достигли больших успехов в изготовлении ружей и карабинов.

[15] С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Кавказе, часть II, Казань, 1891, стр. 207.